

Օձի կծած.

Օձի կծած անցից թիշ բարձր եղնիկի կաշով ամուր կապում են, որ թոյնը շտաքածուի:

Թոյնը քաշելու և ուռուցքը իջեցնելու համար Թարխունը ծեծում և փաթաթում են կծածի վրայ:

Թոյնի դէմ.

Ածուխի փոշին, ցորեն ալիւրի թեփի հետ խառնած, լցնում են ջրի մէջ, եփ տալիս, բամուս և ջուրը թիշ թիշ խմացնում:

Փալաւի կամ բնկուզենու ածուխի փոշին, փոքր ինչ հալած անլի կարագի հետ խառնում, խմացնում են թիւնաւորութիւն և փաղեցնում: Փոքր ինչ յետոյ փղձկում և աղաւաւում է:

ԲԵՀ, ԹԵՂԱԹՐՆ ԵՒ ԲԵԿԵԼԱՅ.

Փոզուրդեան կարծիքով ամէն մարդ մի ասաղ ունի երկընթում, երբ նրա առնալըս— վախճանը, որ նախախնամութիւնից որոշուած է, գալ՝ այդ ասաղը կ'ընկնի և մարդը 40 օրից յետոյ կը մեռնի:

Նաև իւրաքանչիւր մարդ երկնքում կեանքի պուտուկ¹⁾ ունի, որի մէջը թեփ է ածած, երբ Վթեփը պարպի՝ մարդը կը մեռնի: Նւ հէնց այս պատճառով էլ Վհլը թեփը չէ պարպէ՝ սէը նշանակում է գեռ վախճանը չէ հասնել:

Առաջ բերենք մահուան վերաբերեալ միջանի նախապաշարմունք: Եթէ բաթաթը թոնիրն ընկնի՝ տանտիկէնը կը մեռնի: Բու թոչունն ուս կարին որ կանչէ՝ տան մեծը կը մեռնի: Եթէ թին կամ բահը ուսին տանից գուրս ելնեն, մինը կը մեռնի: Եթէ մեռելատունը փոքրտան, միւսնոյն տընից շուտով մի ուրիշն էլ կը մեռնի: Եթէ աւելով մինի գըլ-խին խփեն, երկար չի տալիւ: Եթէ սենեակից սենեակ անցնելիս ձեռքերին երկու մամ բռնեն, մահ կը պատահի: Եթէ հաց եփելիս առաջին եփած հացն ուտեն, կինը կը մեռնի, պէտք է եօթը լրանայ, որ նոր ուտեն: Եթէ ականջը կանչէ՝ ամեռելի ձայն կիմանան, կը լսեն թէ բարեկամներից մին

¹⁾ Ան ճնշիք, հասարկ բանում

վախճանել է: Եթէ ժամակոյժը զերեզման փորելուց տնմիջապէս յետոյ մինի անունը արտասանելով փետառի կոթը գնէ ջուրը, առ կը մեռնի:

Փաղովուրդը հաւատում է և փոքրիկ, սուր գտակ ունեցող ոգիների, որոնց պատերաւ է կոչում: Յուսերը ձեռքերին ունին սև, սպիտակ և կարմիր շաղկապներ: Նախ նայում են Աստուածութիւնից իրենց յանձնուած զաւթարին և ում որ սև լոյսով խփեն, նա կը մեռնի, իսկ ում կարմիրով կամ սպիտակով, միայն կը հիւանդանայ:

Նրբ մարդու տնայլոս գայ՝ որին ոչ մի կերպ ընդգրկմադրել չեն կարող, եթէ մարդը բարի է եղել, բարի հրեշտակը գալիս և ձեռի խնձորով խաբելով մարդուն, հոգին ազաւտկերապ տանում է բերնից, իսկ եթէ չար է եղել, գալիս է չար հրեշտակը, մի ոտը գնում կողքին, միւսը վզին, և ձեռի մզրախով սեղմում կրծքին, ու տանում հոգին սև գործելու նմանութեամբ:

Հէնց որ հոգին աւանդում է, անեցիք թափւում են վերան, և կողկողաքին լալիս, բարձրաձայն գոչելով նրան. «Լ՛մա՛յ, տնուշ պալատ, մեր տան գիրակը, ազաքա անաէր թողիք սուր կերթտաւ և ալլի: Ոմանք էլ սեղմում են ննջեցեալի ոտները, որ թէ այգ և թէ ուրիշ մեռելներից չվախենան, նայում աչքերին, եթէ բաց մնացած լինի, ասում են, աշխարհից գեռ չէ կշտացել, եթէ մատը խաղալ կամ մարմինը փափուկ լինի, դա նշան է, որ նոյն տանից ուրիշն էլ պիտի մեռնի:

Յետոյ մեռելը լողացնում են սառը ջրով տաշտի մէջ կամ կամի և կամ տախտակի վրայ, եթէ տղամարդ է ժամակոյժ, իսկ եթէ՝ կնիկմարդ՝ քէյվանին: Մեռելի ազգականները, մանաւանդ երախտապարաները գնում, մեռելի վրայ մի մի շթտաւ ջուր են անում, որպէսզի վերջինս իւր էանէակը-երախտիքը-հալալ անէ: Եթէ ննջեցեալը կին է՝ մազերը կտրում են. ալտեղից և ծագել է ռազա մկրտառն անէծքը: Լողացնելուց յետոյ աւելացած ջուրը թափում են, տաշտը, կամը, կամ տախտակը բերնքսըվալը կորզում են և ռմուշուրպանս — ջրի ամանը — կտրում, որ նոյն տնից ուրիշն էլ չմեռնի:

Ապա միայն մի քանի գիւղերում պատանքի կտորից քահանային կարել էն տալիս խալաձև վարչամտի, որ զնում են ննջեցեալի երեսին, պնշերը բամբակով խունի կոխում, բերանին նշխարք դնում, Հասարակ կտուից շապիկ, վարտիկ կարում հագցնում, ձեռքերը կրծքի վրայ բարեւ բռնեցնում, երբեմն ձեռին մոմ տալիս և ապա պատանքում են, ամբողջապէս փաթաթում են կտուի մէջ և կարում: Պատանքի աւերացած կտուը փաթաթում են սեանք՝ որ նայն տնից ուրիշը շուտով չմեռնի: Մի բարակ թուկ էլ անցկացնելով ուտի, տաների և կրծքի վրայով խալաձև կապում են, բայց սո ոչ բոլոր գիւղերում: Յետոյ փաթաթում են մի կապերտի մէջ և եկեղեցուց բերելով Հասարակաց կուպին կամ ջախոյը՝ դնում մէջը, տանում տան մէջ տեղը դնում: Եւ այս բոլորը նրանք անում են ընդամէնը երկու ժամուայ ընթացքում: Արոււ գիւղում, երբ միեին պատանքում են, շարժում է և ուշքի գալիս, իսկոյն պատանքը պահում են և տում, թէ սիրտք գնաց օգից տուն բերինք: Այժմ այդ մարդը կենդանի է:

Գառուդ ժամից զալիս է քահանան, զալիս են և մեռելի ազգականները, բարեկամները, գրկիցները և առհասարակ գիւղացիք, ինչքան հարուստ լինի մեռելը՝ այնքան շատ մարդ: Ամէն շօտ ապրիս եկող համբուրում է ննջեցեալի ամենամօտիկ անձնաւորութեան, մօր, կնոջ, զստեր և այլն ձեռքը, կամ համբուրում է տանով: Վուռ ողջ ըլլիս, Սուրբ Հոգին միխթարէ: Գրեթէ բոլոր եկողները նոր եկողի հետ լալիս են և նրանցից մօտիկները լալով լիշում են ննջեցեալի վերջին խօսքերը, ցանկութիւնները կամ մտադրութիւնները: Կատարում են եկեղեցական նէսը, իսկ մօտիկ ազգականները, մայրը, կինը և աղջիկն, առհասարակ կանայք, չաքած գազազի շուրջը լալիս են. մայրը, մամը և այլ պառաւաններ լալիս և բարձրաձայն երգի եղանակով բաներ են ասում: Եկեղեցական խորհուրդը կատարելուց յետոյ կանայք և մօտիկ ազգականները ընկնում են գազազի վրայ և բարձրաձայն լալով, կանչելով համբուրում ննջեցեալին, ապա յօրս այր մար-

գիկ բռնում են գազազը և տանում եկեղեցի: Դազազի տեղը անեցիկներից մին մի քար է զնում, որ ննջեցեալի լիշտակը հաստատ մնար: Առաջից զնում է քահանան տիրացուի և խաչ խաչուտոի հետ, զգուշանալով լետ նայել, որովհետեւ եթէ լետ նայէ, կ'տեսն թէ նոյն տանից շուտով ուրիշն էլ է մեռնելու և մաքերում կը հայհոյեն քահանային, լետեկից տանում են գազազը զրջտպատուած ալը մարգկանցով, որոնք շուտ շուտ փոխուում և տանում են գազազը: Ամենից վերջը զնում են կանայք, նսրահարսեր և աղջիկներ: Եթէ մահը պատահել է շարաթ որը՝ ննջեցեալը մի օր պահում են եկեղեցու մէջ, որովհետեւ գրա համար լատուկ սենեակ գրեթէ ոչ մի գիւղ չունի, և կիւրակի օրը՝ պատարագով թաղում, իսկ եթէ ուրիշ օր է մեռել, հէնց եկեղեցի զնելն ու վերցնելը մէկ են անում:

Դազազը զնում են եկեղեցու մէջտեղը, գետնին, ննջեցեալի մայրը յարում է գլխի վերեւը, միւս մօտիկ ազգական կանայք շուրջը. և մինչդեռ քահանան կատարում է կարգը՝ սրանք բարձրաձայն լալիս են. մայրն էլ եղանակով բաներ է ապում և խանդարում քահանային:

Կարգը կատարելուց լետ լաճախ մեռելատէրը խնդրում է զանձ տեսել: Թէև եկեղեցական օրէնքով արգելուած է զանձ տեսլը, սակայն հազիւ է պատահում, որ քահանան մերժէ ննջեցեալի տիրոջ խնդիրը, որովհետեւ շահ ունի: Տիրացուները քահանայի ձայնակցութեամբ առում են մի տխուր զանձ, որ շուտ շուտ ընդհատուում է բազմութեան մեծ մասի, մանաւանդ կանանց լալիւնով: Երբ զանձը վերջացնում են՝ աթոռակալը զնում է ննջեցեալի կրծքին մի շթաբախտ—ապուէ—գրեթէ բոլորը համբոււում են ննջեցեալին և մի քանի կուպէկ ձգում թարախի մէջ, որն (50 կ.—1 ը.) աթոռակալը (երեսփոխը) վերցնում և լետոյ քահանային է տալիս: Տգամարգիկ ննջեցեալին տանում են գերեզմանատուն, իսկ կանայք վերադառնում ննջեցեալի տունը: Դերեզմանը ննջեցեալի ազգականների գերեզմանների մօտ մէկ արշին լայնութեան և երկու արշին խորութեան փորած պատրաստած է լինում

գիւղացիներին ով էլ որ պատահել էր: Գերեզման փորողին պատահողը ասում է. «Քրիստոս յարեալ ի մեռելոց, իսկ գերեզման փորողը պատասխանում է. «Որհնեալ է յարութիւնն Քրիստոսի: Մի քանի գիւղերում էլ ասում են. «Օգորմի Աստուած».—Օգորմի բարի ծնողացոյ հագումն Ապա սա գուրս է գալիս գերեզմանին և պատահողը փորում: Երբ վերջացնում են՝ թին ու փետաօր խալածեւ դնում են գերեզմանի բերանին:

Ննջեցեալը բերում, գնում են գերեզմանի աջ կողմը, կատարում են թաղման կարգը, մինը իջնում է գերեզմանի մէջ, կապերափց հանում են մեռելը և սա գրկում պարկեցնում է գերեզմանի մէջ, նախապէս գլխի տակ մի երկու քար դնելով, որպէսզի գլուխը բարձր լինի: Եթէ ննջեցեալը կին է, կապերաք բռնում են գերեզմանի վրայ, թէ նրան գերեզման իջեցնելիս և թէ գերեզմանը հողով լցնելիս, որպէսզի պահպանուի ամօթխածութիւնը: Երբ քահանան ննջեցեալի մօտիկ ազգականի բռնի մէջ օրհնում է հողը և ձգում գերեզմանի մէջ, շրջապատողները լցնում են գերեզմանը հողով: Ամեն մարդ զոնէ մի բուռն հող պիտի ձգէ ննջեցեալի վերայ, որպէս հատուցումն նրա երախտիքի: Գերեզմանին հանած բոլոր հողը լցնում են վերան և մի բուռ անգամ հեռու չեն թողնում, մեղք համարելով այդ:

Թաղման կարգը կատարելուց յետոյ բոլորը համբուրում են քահանայի ձեռքի խաչը: Քահանան էլ ասում է. «Աստուած փրձահատույց արասցէ: Աետոյ ձեռք են տալիս ննջեցեալի մօտիկ ազգականներին ասելով. «Հողին սուրբ մի թարէ: Դուք ողջ ըլլէք: Այստեղից քահանան, ամբուսկալը, տիրացուները, մօտիկ ազգականներին շատերը և անշուշտ գերեզման փորողները միասին գնում են ննջեցեալի տունը, ուր ճաշ են անում, ջնախելով որ մինչև անգամ ճաշի ժամանակ չէ: Այս ճաշը կոչւում է «փետաօրի հաց» և յառկապէս տրւում է գերեզման փորողներին: Երկրորդ օրը մօտիկ ազգականներն ու զրկից կանայք մի մի կաօր ստպոն բերում, ննջեցեալի բոլոր շորերը լուանում են, և յետոյ գնում, նըն-

լեցեալի գերեզմանը օրհնել են տալիս: Այնուհետև եօթն օր շարունակ քահանան գնում է ննջեցեալի տունը եօթնէկից կատարելու և այդ եօթը օրը շարունակ եօթն օրէնքի հաց են տալիս, գիւղացիներէց 10—15 հոգու, որոնց մէջ լաճախ լինում է քահանան և երեցփոխը: Եօթը լրանալիս՝ ազգականները հաւաքւում և գնում ննջեցեալի գերեզմանը օրհնել են տալիս ապա կամ այդ օրը կամ մի ուրիշ օր պատարագ տանում, ու եօթի, հոգու հաց տալիս:

Նախապէս տանելով քահանայի հաճութիւնը պատարագն իրենց հին ու նոր ննջեցեալների յիշատակին մատուցանելու, նրանք ուղարկում են նրան գինի՝ բաժակի, ալիւր՝ նշխարի, մօմ՝ գիշերը վառելու, փայտ՝ նշխարն եփելու համար: Ապա մօրթում են մի երկնջ կամ մի քանի ոչխար, կամ մի կով, որից բէլվանին պատրաստում է ետինի, մօով ապուր, էրիշտով և բլղրով փլու: Իսկ եթէ պաս է՝ էրիշտով ապուր, լոբիջուր, կօրկաւ չիլա, արիւկէ սիրքալի և հատ լոբի:

Առաւօտ շատ վաղ, լուսը դեռ չբացուած սկսում է ժամերգութիւնը և ժամը 6-ին վերջանում պատարագը: Պատարագին տիրացուն պատարագ տանողին տանում Աւետարանը համբուրել է տալիս: Եկեղեցու դուռը պատարագ առնողը հրաւիրում է ժամուորներին հոգու հացի, լճրամեցէք էրթանք մերը, հոգու հաց ունինք: Սահայն հրաւիրելիս կէս բերան ասում է աղքատին, իսկ ստիպում, քաշքաշում հարստին: Այսպէս լցւում են պատարագ տանողի տունը քահանան իւր երեցփոխի և տիրացուների հետ, գլխաւան, տանուտէրը իւր գզիքի ու գրագրի հետ, գիւղի իշխանները և մի քանի ծերունի աղքատներ: Աւագութեան կորգով նստում են օգան. օճիխի մէկ գլուխը քահանան, միւսը՝ գլխաւան կամ տանուտէրը և անհամբեր սպասում հացին: Այստեղ մի առանձին խօսակցութիւն չի լինում, օմանք պատմում են ննջեցեալի բարի գործերը և ցաւակցութիւն յայտնում նրա վաղահաս մահաւան, ուրիշներ իրենց առօրեայ գործերն են առաջ բերում և կամ սրա նրա գոմէշն ու եղբ գովում: Շատ շուտով զբւում են միջանի խոնջաներ ստարնե-

րի միջև և հրաւիրւածները բախուած են խնջանքի շուրջը: Մի քարղանի մէջ մի քիչ մատաղ ածած, բերում գնում են մէջ տեղ և քահանան օրհնում է թէ հացը և թէ մատաղը, որ մի մի կտոր վերցնելով ուտում են, մի քանի կրտսր էլ ցիււմ են կաթնայի մէջ: Յետոյ արգէն մատուցանում են տան երիտասարդների ձեռքով կերակուրները և հրաւիրւած 30—70 հոգին բախրովին լուռ, ախորժակով ճաշում է. երբեմն միայն սխառել կերակուր բէս է լուում: Պէտք է ասել, որ կերակուրները մատուցւում են մեծ քարղանների մէջ ածած և 5—6 հոգի միեւնոյն քարղանից են ուտում, յաճախ իւր տանից գրպանը գրած բերած գրգալով: Մաս գիւղերի եկեղեցիներում նուիրւած գգալներ են պահում, որ առնում են հոգու հաց աուղները:

Նրբ ուտում, պրծնում են, հաւաքում են հացը, մնում է միայն քահանայի առջև գրւած խնջան՝ վերան մի լուռ հաց: Ցան տէրը խնկամանի նման կաւէ թոսի մէջ ասի. Բահանան մի նըշխարք է գնում հացի վրայ և կանգնում սնոցոյն է տաւմ: Կանգնում են և բախրը, Ցան տէրը առնում է խնկամանը և փշելով մօտեցնում հրաւիրւածներին, որոնք ձեռքով նուխը գէպի իրենց բաշելով խաշակնբւում են: Անպիտան արիւցուները նուրբեան պատճառով չեն ուզում բուրգաւոր եկեղեցուց այգտեղ բերել: Ազօթքը վերջացնելուց յետոյ՝ նընջեցեալի տէրը տալիս է քահանային 20 կոպէկ ժամուց, 20 կ. էլ երեցփախին յօգուտ եկեղեցու: Յետոյ բախրը մի վայրկենում՝ շատուած ընդունելի էնէ, հոգին սուրբ կամար կապէ հին ու նոր ննջեցեալներից վրանս տաւմ և հեռանում են: Ցան երեխաներից մինը խնկամանը ձեռին կանգնում է գոան մօտ, և ամէն անցնող խնկի նուխը իրեն քաշում, խաշ հանում և սխարի յիշատակ ըլլիս, Աստուած օղորմի մեռել-նուտ հոգունս տաւմ է և գնում:

Եթէ ննջեցեալը քան տարեկանից ցածր է, փեռատի և եօթնէից հայ չեն տալիս:

Ննդեցեալի թաղման համար մօտաւորապէս հետեւեալ ծախսն է լինում.

Գառանքի	1բ.—60 կ.				
Քահանային՝					
ա. մինչև 19 տարեկանը	—20 կ.				
բ. 20 տար. բարձր	<table> <tr> <td>լաժուանացածին</td><td>2 ր.—</td></tr> <tr> <td>ամուսնացածին</td><td>4 ր.—</td></tr> </table>	լաժուանացածին	2 ր.—	ամուսնացածին	4 ր.—
լաժուանացածին	2 ր.—				
ամուսնացածին	4 ր.—				
գ. Ամուրիին	<table> <tr> <td>առանց կողոպուտի</td><td>8 ր.—</td></tr> <tr> <td>կողոպուտով</td><td>5 ր.—</td></tr> </table>	առանց կողոպուտի	8 ր.—	կողոպուտով	5 ր.—
առանց կողոպուտի	8 ր.—				
կողոպուտով	5 ր.—				
Փետատի, եթնէկից և հոգու հացի	20—30 ր.—				

Եթէ ամուսինը կենդանի է՝ կողոպուտ առնում են միայն հանգերձը, իսկ եթէ ոչ՝ հանգերձը և անկողինը:

Գերեզմանատունը սովորաբար գտնւում է գիւղի մի կողմը, բլրակի կամ մի գաշտակի վերայ, մի քանի գիւղերում էլ եկեղեցու շուրջը: Գերեզմանի վրայ ձգում են քառանկիւնի կամ օրոցաձև տաշուած քար կամ դարձում կտոր քարեր:

Միմիայն քահանաների և նշանաւոր մարդկանց գերեզմաններն ունենում են արձանագրութիւն: Մի քանիսի վրայ էլ փորում են լինում ննդեցեալի պարսպման լատիանիչ մի զօրծի:

Քաղաքի գերեզմանատունը գտնւում է քաղաքից դուրս գէպի արևելք: Գերեզմանները միմեանց շատ մօտ են և անկանոն դասաւորուած: Մի շարքով, միմեանց մօտ թաղուած են միայն մի գերգաստան կամ ընտանիքի անդամները:

Գերեզմանաքարերը երեք տեսակ են. երեխաներինը՝ սովորաբար օրոցաձև է, հասակաւորներինն՝ առաւելապէս գազազաձև, թէև օրոցաձևեր էլ կան, կարմիր սրբատաշ քարերից շինուած և քարէ պատուանդանների վերայ ամրացրած:

Հոգեւորականներինը քառանկիւնի քար է, ոտների կողմը $1\frac{1}{2}$ արշին բարձրութեան, $\frac{1}{2}$ արշին լայնութեան և 2 վերջոյ հաստութեան քար կանգնեցրած, որի վերի ծայրը բոլորակաձև է: Սրանց գէպի արևմուտք նայող երեսի վրայ եթէ քահանայի է՝ քանդակուած է միայն խաչ, իսկ եթէ վարդապետի՝ խաչ, աջ կողմում գաւազան, ձախում Աւետարան, իսկ

գլխին զեղար: Երկուսի տակն էլ աւետարանից յարմարաւոր խօսքեր են փարագրուած:

Աղքատների գերեզմանաքարերը, եթէ կան էլ, քառանկիւնի տաշած կամ անտաշ քարեր են, յաճախ առանց տապանադրի:

Ճապանազրեր.

Տապան Նազդի Իւզարեր գոտեր Կարապետ աղայի 'ի հասակի 18 տմաց:

Մի գիւ լացցէ երգիչ Դոզման

Մի սոխակին աչք սիրաջան

Այլ ծնագաց իմ յարմամ

Եւ ազգակցացս ամենայն:

Մի է Կարապէն ողբաւայն,

Մի է տատարակն քաղցրաւայն

Այլ սիրողին իմ սիրական,

Եւ օրորացս անխնամ,

Յարաց անզուլթ սուրն մահուան

Ջիւս սրտեալ արկ յայտ տապան,

Հանկիր ասկերջ իմ տիրական

Տյարութիւն ժարգկան համայն:

24 Եւ ժառարազդ, որ վազ մեռանի,

Այլ որ յետ մահուան սիրելայն՝ աղբի:

«Տիեզերաց յայն ծագաց զհողիզէնդ յայդ ափանց ամէր առ իս».

Ամալքաւայինն որտաց:

Յահեղ զնէզ Տէր իմ Տէր

Դող մահացուս հարկանէր

Ընկալ զհողիտ:

Յաղիւ ձայնիդ օն զարթիր:

Յովհաննէս քահանայ Եզիտիանեանց, իւր կենաց տարեկան չըր-
ջանների 63 բուրբիւլ երգարան հիւանդութիւնից յետոյ մահկանա-
ցուն կնքեց 10 փետր. 1863 ամի: